



ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԱՅԻՍՅԱՆԻ ՄԻԶՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ
2020-21 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ԾՐԱԳԻՐ

Դպրոցում գործող աշակերտական խորհուրդն այն կարևոր օղակն է, որի միջոցով իրականացվում են երեխաների դաստիարակչական խնդիրները: 2019-20 ուսումնական տարվա ընթացքում գումարվել են 10 աշակերտական խորհրդի նիստեր և 2 ընդհանուր աշակերտական ժողովներ:

2019-2020 ուստարում մեծ շուքով նշեցինք ՀՀ և ԼՂՀ անկախության, Հայոց բանակի ստեղծման և Շուշիի ազատագրման 28-րդ տարեդարձները, Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 75-ամյակը և Հայոց մեծ եղեռնի 105-րդ տարելիցը:

«Հայաստան համահայկական հիմնադրամի» ծրագրին ակտիվորեն մասնակցեցին դպրոցի աշակերտական և ծնողական կոլեկտիվները՝ հիմնադրամին մուծելով 16000 դրամ գումար:

Դպրոցում գործող աշակերտական խորհուրդը կարող է հպարտանալ, որ ունի իր կահավորված սենյակը՝ անհրաժեշտ բոլոր պարագաներով: Մնում է, որ մենք կարողանանք դասարանական աշակերտական խորհուրդների, դասղեկների հետ միասին նոր շունչ հաղորդել դպրոցական աշակերտական ինքնավարության մարմինների աշխատանքներին:

Սկսած 2013թվականից՝ դպրոցում գործում է ՄԱԿ «Պարենի համաշխարհային ծրագիրը», որի շրջանակներում նախորդ ուստարում դպրոցի նախակրթարանի և 1-4 ը դասարանի 112 երեխա ստացել է անվճար տաք սնունդ:

Դպրոցի աշակերտները եղել են Հայաստանի տեսարժան վայրերում (Գյումրի, Սարդարապատ, Օշական, Երևան):

Դպրոցի աշակերտները, համագործակցելով «Հայ ծառատունկ» կազմակերպության հետ 2008-20թթ. շուրջ 300 տնկի են տնկել Արմավիր-Մայիսյան ճանապարհի երկու կողմերում, գյուղի մշակույթի տան և ամբուլատորիայի տարածքում: 2019-20 ուստարում աշակերտական և մանկավարժական ողջ կազմը ակտիվ մասնակցություն ցուցաբերեց համապետական շաբաթօրյակներին: Նոր ուստարում «Մաքուր հայրենիք» ծրագրի շրջանակներում կշարունակվեն համայնքի և դպրոցի մաքրման և կանաչապատման աշխատանքները:

Ազգային երգ ու պար առարկայի դասավանդումը /5-6-րդ դասարաններ/ և ուսուցիչ Օ.Իսրայելյանի գլխավորությամբ գործող պարի խմբակը գեղագիտական նոր որակ ու շունչ են հաղորդել դպրոցում կազմակերպվող միջոցառումներին: Ամուր է կապը Մեծամորի ոստիկանության անչափահասների տեսչության բաժնի աշխատակիցների և Սուրբ Ղազար եկեղեցու քահանա տեր Տաթևի հետ: Դպրոցում գործում է «Սուրբ Աստվածածին» կիրակնօրյա վարժարանը: «Մեղու» հանրապետական հայերենի մրցույթին մասնակցել է 57 աշակերտ, 7-րդ դասարանի աշակերտուհի Սաթենիկ Գալստյանը արժանացել է հատուկ մրցանակի: 8-րդ դասարանի աշակերտ Էրիկ Հակոբյանը ոչ միայն մեր դպրոցի, այլև մարզի հպարտությունն է. նա ՀՀ լավագույն պատանի շախմատիստների ցանկում է և 2019-20 ուստարում ևս հաղթող ճանաչվել է մի շարք մրցաշարերում. 2019թ. օգոստոսին մասնակցել է Արցախում կայացած համահայկական խաղերին: Առաջին տեղ է գրավել 2020թ. փետրվարին Հենրիկ Գասպարյանի 110-ամյակին, Աբովյան քաղաքի 56-ամյակին նվիրված միջազգային մրցաշարերում, արագ շախմատի մրցումներում: Իսկ բոլորովին վերջերս՝ օգոստոսի 13-ին՝ շախմատի աշխարհի 9-րդ չեմպիոն Տիգրան Պետրոսյանի կիսանդրու բացման օրը, Արմավիրում կայացած միաժամանակյա սեանսում ևս հաղթել է մեր Էրիկ Հակոբյանը:

8-րդ դասարանի աշակերտուհի Ժենյա Սարգսյանը 2019թ. հուլիսին Բաթումիում կայացած ազգային պարերի միջազգային մրցույթում արժանացել է առաջին մրցանակի: 2019-թ. նոյեմբերի 19-ին հաղթել է Հայաստանի պարային բաց առաջնությանը:

3-րդ դասարանի աշակերտ Արթուր Արամյանը Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 75-ամյակին նվիրված հանրապետական մրցույթում առաջին տեղն է գրավել, «Ես հիշում եմ, ես հպարտանում եմ» պատանի ընթերցողների միջազգային մրցույթում արժանացել է դափնեկրի կոչման, իսկ «Ընթերցենք Պուշկին-2020» միջազգային մրցույթում՝ հատուկ մրցանակի:

Ամեն տարի փետրվարի 21-ին՝ Մայրենիի տոնին, դպրոցում անցկացվում է «Հայ ասպետ» հայագիտական վիկտորինան: Խաղին մասնակցելով՝ մեր աշակերտները ցուցաբերում են իրենց գիտելիքները մեր հայրենիքի պատմությունից, գրականությունից ու մշակույթից:

Աշակերտների իրավագիտակցությունը բարձրացնելու նպատակով դպրոցում անցկացվեցին մի շարք միջոցառումներ. 10-12-րդ դասարանների աշակերտները նոյեմբերի 15-ին մասնակցեցին Արմավիրում կայացած «Իրավունքը հասանելի է բոլորին» թեմայով սեմինար-քննարկմանը, որի ընթացքում ներկայացվեցին և քննարկվեցին ազատ արտահայտվելու, մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունքները: Մեծամորի ոսիկանության անչափահասների բաժնի աշխատակիցները բռնության և նրա տեսակների մասին հանդիպում-գրույց անցկացրին դպրոցում, իսկ աշակերտական խորհուրդը դիտեց տեսանյութ՝ «Հասակակիցների միջև բռնության նվազեցման փորձ» խորագրով: Աշակերտական խորհուրդն ու դպրոցի հոգեբանը փորձեցին հակաբուլլինգային մեխանիզմ ներդնել դպրոցում. 5-12-րդ դասարանների աշակերտներին տրամադրվեցին հարցաթերթեր՝ պարզելու՝ կա՞րողոք բուլլինգ (շարունակական բռնություն) մեր դպրոցի աշակերտների շրջանում:

Դեկտեմբերի 6-ին մոմավառությամբ նշվեց երկրաշարժի զոհերի հիշատակը, «Աղետներին դիմակայության օր» խորագրով համապետական միջոցառումների շրջանակում կազմակերպվեց շենքից արագ հեռացում, իսկ դեկտեմբերի 7-ին ԱԻՆ փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության՝ Արմավիր քաղաքի հրապարակում կազմակերպված հրշեջ-փրկարարական գույքի ցուցադրությանը ներկա էին նաև Մայիսյանի միջնակարգ դպրոցի աշակերտները:

Դեկտեմբերի 12-ին «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կրթական բաժինը Մայիսյանի միջնակարգ դպրոցում իրականացրեց ինտերակտիվ դաս-սեմինար՝ «Անտառը էկոհամակարգ» թեմայով:

Դեկտեմբերի 13-ին «Հուլիսի Մեծամոր» ՀԿ Մայիսյանի միջնակարգ դպրոցում իրականացրեց «Հավասար իրավունքներ, հավասար վերաբերմունք» ծրագիրը: Հանդիպման նպատակն էր ներառական կրթության խնդիրների ու խոչընդոտների վերհանումը, հավասար և ոչ խտրական վերաբերմունքի խթանումը, ինչպես նաև ընդհանուր ներառականության և իրավունքների վերաբերյալ աշակերտների իրազեկության մակարդակի բարձրացումը:

Դեկտեմբերի 18-ին Արցախյան պատերազմի մայիսյանցի հերոս Հայկ Կիրակոսյանի ծննդյան օրը նշվեց նրա հուշաքարի մոտ: Կիսամյակն ամփոփվեց ամանորյա ժամանցային միջոցառումներով:

Պարույր Սևակի, Գևորգ Էմինի և Սիլվա Կապուտիկյանի պատգամներով, նրանց ստեղծագործական աշխարհի բացահայտումներով արժևորվեց ՄԱԿ կողմից հռչակված կրթության միջազգային օրը՝ հունվարի 24-ը: Կազմակերպվեց համադպրոցական միջոցառում: Դպրոցի վաստակաշատ, հմուտ մանկավարժ Լ.Գևորգյանի՝ աշխատանքային գործունեությունը դպրոցում դադարեցնելու և վաստակած հանգստի ճանապարհելու առթիվ կազմակերպվեց հանդիսավոր միջոցառում, որին ներկա էին տարբեր տարիների իր շրջանավարտները, հարազատները, ընկերները:

Ավանդույթ է դարձել ՀՀ բոլոր պետական տոները, հայրենասիրական բոլոր դասերը համայնքի՝ Արցախյան պատերազմում զոհված մայիսյանցի ազատամարտիկներին նվիրված հուշարձանի մոտ նշելը: Այսօր առավել կարևոր է սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակությունը: Դպրոցի 6-12-րդ դասարանները անվանակոչված են մայիսյանցի 7 զոհված ազատամարտիկների անուններով: Դպրոցի նախկին շրջանավարտ Սարգիս Մովսիսյանը թշնամու դիվերսիոն հարձակումը հետ մղելիս 2014թ օգոստոսի 3-ին զոհվեց՝ հետմահու արժանանալով «Արիության մեդալի»: 2016թ. ապրիլյան դեպքերը ևս ապացուցեցին, որ մանկավարժները ռազմահայրենասիրական դաստիարակության գործում մեծ ներդրում ունեն: Արման Գինոսյանը իր հերոսության համար ՀՀ նախագահի կողմից պարգևատրվել է «Արիության մեդալով», իսկ Օնիկ Մանուկյանը ՀՀ ՊՆ նախարարի հրամանով պարգևատրվել է «Դրաստամատ Կանայան» մեդալով: Տեղին է նշել նաև Գառնիկ Մկրտչյանի, Տիգրան Բարսեղյանի, Ռուբիկ Մանուկյանի, Հայկ Շաղյանի պարգևների մասին: Նրանց հերոսությունը օրինակ ու ուղենիշ է աշակերտների համար: Հայոց բանակի 28-ամյակին դպրոցը հյուրընկալել էր իր հերոս-շջանավարտներին՝ ապրիլյան քառօրյա մասնակիցներին, նրանք անկեղծ ու մտերմիկ գրույց

անցկացրին 9-12-րդ դասարանների աշակերտների հետ, դպրոցի աշակերտները ծաղիկներ խոնարհեցին Արցախյան պատերազմում զոհված մայիսյանցի հերոսների հուշարձանին:

Փետրվարի 8-ին դպրոցում նշվեց սիրո բարեխոս Սուրբ Սարգսի տոնը՝ երիտասարդների օրհնության օրը: Գեղեցիկ ստեղծագործությունների ընթերցմամբ ու երգերի ունկդրումով նշվեց Վահան Տերյանի ծննդյան 135-ամյակը: Փետրվարի 12-ին՝ Հրանտ Մաթևոսյանի ծննդյան օրը, աշակերտները դիտեցին «Աշնան արև» ֆիլմը:

Փետրվարի 13-ին սովորողների իրավական գիտելիքներն ամրապնդելու և բռնության դեպքերը բացառելու նպատակով Մեծամորի ոստիկանության աշխատակիցները դպրոցի բարձր դասարանների աշակերտների շրջանում անցկացրին հանդիպում զրույց սուր, կտրոդ-ծակոդ գործիքների և նման այլ իրերի կրելու մասին:

Փետրվարի 14-ին դպրոցի բակում նշվեց Տյառնընդառաջը: Ծիսական կերակուրներով լի սեղանների, տոնական խարույկի շուրջ ներկայացվեց տոնի խորհուրդը, հարսանեկան պարեր պարեցին, երգեցին:

Մեծ լոռեցու՝ հանճարեղ Թումանյանի ծննդյան օրը՝ փետրվարի 19-ը, Հայաստանում նշվում է որպես գիրք նվիրելու օր: Աշակերտները դպրոցին, ուսուցիչներին, միմյանց գրքեր նվիրեցին: Այս տարի գրքի տոնը նշվեց համայնքի գրադարանում: Դպրոցի և համայնքի գրադարանավարները կազմակերպել էին համատեղ միջոցառում:

Փետրվարի 21-ին՝ Մայրենիի օրը, անցկացվեց խաղ-վիկտորինա 7-12-րդ դասարանների աշակերտների միջև. այն աշակերտների լեզվական գիտելիքներն վերստուգելու, ամրապնդելու և լեզուն արժևորելու տեսանկյունից շատ կարևոր էր, ուսուցողական:

Փետրվարի 28-ին կազմակերպվեց մոմավառություն, հարզվեց Սումգայիթի զոհերի հիշատակը:

Փետրվարի 29-ին՝ Քաղաքացիական պաշտպանության միջազգային օրվա նախօրեին, կազմակերպվեց տարհանում, բացատրվեց, թե որոնք են արտակարգ իրավիճակներում անհրաժեշտ քայլերը:

Մարտի 13-ից սկսած՝ երկրում արտակարգ դրություն հայտարարվեց, և անցանք հեռավար կրթության: Դասասենյակներին ու դպրոցական ուրախ առաօրյային փոխարինեցին հեռավար դասերը, սոցիալական հարթակները, սովորական մատյաններին՝ էլեկտրոնայինները, խորհուրդների սովորական նիստերին՝ հեռավարները: Թեև երկրորդ կիսամյակում ծրագրված միջոցառումների մի մասը չկայացավ, բայց դրանց զգալի մասն անցկացվեց հեռավար, և աշակերտները հանդես եկան ինքնուրույն նախաձեռնություններով, տեսանյութերի պատրաստմամբ, գրաֆիկական աշխատանքներով:

Արտակարգ դրության պայմաններում շատ աշակերտներ ավելի մեծ ոգևորությամբ սկսեցին սովորել: ԱԽ անդամներն իրենց նորովի դրսևորեցին, հանդես եկան մի շարք նախաձեռնություններով՝ նկարների ցուցահանդեսներ («Փրկենք մեր մոլորակը», «Միասնությունը ուժ է»), տեսանյութեր («Տանը մնա», «Մեր շնորհալիները»): Երևանի ռուսական մշակույթի ու կրթության կենտրոնի կողմից կազմակերպված Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 75-ամյակին նվիրված «Խաղաղ երկնքի տակ», «Հաղթանակի ծիածանը» նկարների հանրապետական մրցույթ-փառատոնին մասնակցեցին նաև մեր աշակերտներ Ադելինա Շահբազյանի, Հրաչյա Միմոնյանի և Այվազ Թարվերդյանի նկարները:

Մայրության և գեղեցկության, Սուրբ Զատիկ տոները նշվեցին գեղեցիկ ելույթներով ու տեսաշարերով: Աշակերտական խորհրդում ստեղծվեց գրական անկյուն՝ «Վերնատուն», ուր բանաստեղծությունների գեղեցիկ ընթերցմամբ աշակերկները ներկայացան: Շատերը բացահայտեցին ստեղծագործական իրենց թաքուն շնորհներն ու ընդունակությունները: Եղեռնի զոհերի հիշատակի օրվա, աշխատավորների մայիսյան եռատոնի առթիվ ևս կազմակերպվեցին միջոցառումներ, պատրաստվեցին սլադներ: Իրենց նախասիրություններն ու ընդունակությունները բացահայտող ուսուցողական, կրեատիվ տեսանյութերով ներկայացան Նարեկ Ավագյանը, Ժենյա Մխիթարյանը, Արման Կիրակոսյանը, Անյա Մազմանյանը, Սուրեն Ավագյանը, Մարիա Հովսեփյանը: Շատերն իրենց փորձեցին ուսուցչի դերում (Ալլա Էլրուզյան, Դիանա Զարգարյան, Սաթենիկ Գալստյան, Արմինե Սողոմոնյան)՝ հանդես գալով իրենց պատրաստած հեռավար տեսադասերով:

Բարձր մակարդակի վրա է գտնվում սանիտարական վիճակը. դպրոցն ապահովված է ջրով, ջեռուցումով, 5-12-րդ դասարանի աշակերտներն իրենք են մաքրում իրենց դասասենյակները: 2020 թվականի ապրիլ-մայիս ամիսներին բոլոր դասարաններում անցկացվեցին հաշվետու դասարանական աշակերտական խորհրդի նիստեր, որտեղ վերլուծեցին 2019-20 ուստարում կատարած աշխատանքները: Նոր ուսումնական տարում դպրոցի աշակերտական խորհուրդը, հիմք ընդունելով ՀՀ ԱԺ կողմից ընդունված «Երեխաների իրավունքների մասին» օրենքը, ինչպես նաև ԿԳՆ կողմից ընդունված «Աշակերտական ինքնավարության մարմինների» մասին կանոնադրությունը, իր առջև խնդիր է դրել նոր մակարդակի վրա բարձրացնել աշակերտական ինքնավարության մարմինների աշխատանքը: Իսկ դպրոցի դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Ա. Սահակյանը միշտ պատրաստ է օգնելու և օժանդակելու, ինչպես դասարանական, այնպես էլ դպրոցի աշակերտական ինքնավարության մարմինների աշխատանքներն ակտիվացնելուն: 2020-21 ուսումնական տարում մենք արժանի գործերով կնշենք ՀՀ, ԼՂՀ, Հայոց բանակի ստեղծման 29-ամյակները և ՅՈՒՆԵՍԿՕ-ի Հռչակավոր մարդկանց և կարևոր իրադարձությունների 2020-21 օրացույցում ներառված նշանավոր հայերի՝ Ալ.Սպենդարյանի 150 և Ա.Վերնոյի 100-ամյա հոբելյանները:

Դպրոցի աշակերտական խորհրդի նախ.՝ Ժենյա Մխիթարյան

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՒՄ ԼՍՎՈՂ ՀԱՐՑԵՐ

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխ. անձ
ՄԵՊՏԵՄԲԵՐ			
1.	ա. Դպրոցի տնօրենի ուղերձը դպրոցի աշակերտներին: բ. 2019-20 ուստարվա ԱԽ կատարած աշխատանքների հաշվետվություն և նոր 2020-21 ուսումնական տարվա խնդիրները: գ. 2020-21 ուստարվա աշակերտական խորհրդի կազմի ընտրություն:	սեպտեմբեր 2020	Տնօրեն ԴԱԿ ԱԽ
ՀՈՒՆՎԱՐ			
1.	ա. 2020-21 ուստարվա I կիսամյակի ուսման առաջադիմության ամփոփում: բ. Դպրոցի տնօրենի ինֆորմացիան 2020թ.-ի ֆինանսական կատարողականի և 2021թ. բյուջեի մասին:	հունվար 2021	Տնօրենի տեղակալ ԱԽ նախագահ ԴԱԿ
ՄԱՅԻՍ			
1.	ա. 2020-21 ուստարվա ուսման առաջադիմության ամփոփում և ավարտական և փոխադրական քննությունների նախապատրաստում և անցկացում: բ. «Վերջին դասի» «Վերջին զանգի» միջոցառման անցկացում: գ. 2021-22 ուստարվա Աշակերտական խորհրդի ընտրությունների նախաձեռնող խմբի ստեղծում:	մայիս 2021	Տնօրենի տեղակալ ԴԱԿ

ԱԽ-ում լսվող հարցեր

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխան
1-ԻՆ ՆԻՍՏ			
1.	Առաջնորդվելով Պարետի 2020 թվականի օգոստոսի 18-ի N 253-Ն որոշման հավելված N 22-ով՝ աշակերտական խորհրդում լսել, քննարկել կորոնավիրուսային հիվանդության առկայության դեպքում անհրաժեշտ գործողությունները, անհատական պաշտպանության միջոցների (այսուհետ՝ ԱՊՄ) կիրառման կանոնները, ձեռքերի հիգիենան, շնչառական էթիկան:	2020 24 օգոստոս	ԱԽ նախագ. ԴԱԿ
2.	Աշակերտական խորհրդի հաշվետու-ընտրական ժողովի նախապատրաստում:		
3.	2019-20 ուսումնական տարվա ներքին գնահատման գործունեության չափանիշների ծանուցում:		
4.	Աշակերտներին դպրոցի ներքին կարգապահական կանոնների ծանոթացում:		
2-րդ ՆԻՍՏ			
1	Աշակերտական խորհրդի նախագահի ընտրություն և ԱԽ անդամների միջև հասարակական աշխատանքի բաժանում՝ մասնագիտացված հանձնախմբերի ստեղծում և ղեկավարների նշանակում:	2020 սեպտեմբեր	տնօրեն ԴԱԿ ԱԽ նախագ.
2.	Աշակերտական խորհրդի 2020-21 ուստարվա աշխատանքային ծրագրի քննարկում և հաստատում:		
3.	Ծանոթացնել 6-րդ դասարանցիներին ԱԽ-ի կանոնադրությանը և ներգրավել հանձնախմբերի աշխատանքներում:		
4.	Ծանոթացում 2020-21 ուստարվա դպրոցի տարիֆիկացիային:		
3-ԲԴ Ն Ի Ս Տ			
1.	Դպրոցի սանիտարական վիճակի դրվածքը:	2020թ հոկտեմբեր	տնօրեն ԴԱԿ ԱԽ նախագ. հոգեբան
2.	2020թ. դպրոցի նախնական բյուջեի քննարկում:		
3.	Համընդհանուր ներառական կրթության և ԿԱՊԿՈՒ երեխաների մասին:		
4-ԲԴ Ն Ի Ս Տ			
1.	Մեդիագրագիտությունը որպես ժամանակակից կրթության բաղկացուցիչ տարր:	2020թ նոյեմբեր	ԱԽ նախ. ԴԱԿ տնօրեն Գ.Փարսիլյան
2.	«Հանրակրթական ուս. հաստատություններում 12-րդ դասարանների քննությունների 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացը կազմակերպելու ընթացակարգը հաստատելու մասին» ՀՀ ԿԳ նախարարի հրաման:		
3.	«Հայ ասպետ» միջդասարանական հայագիտական խաղ-մրցույթի անցկացման ձևաչափի ու բովանդակության մասին. 2020-21 ուստարում նշվող հայ նշանավոր մարդկանց հոբելյանների առթիվ մրցույթում հարցեր ընդգրկել նրանց մասին:		

4.	Դասագրքերի վարձավճարների գումարների ամփոփում:		
5-ԸՆԴՆԻՍ			
1.	2020-21 ուստարվա 12-րդ դասարանի միասնական և ավարտական քննությունների կազմակերպման աշխատանքները:	2020թ	ԱԽ նախ ԴԱԿ
2.	Դպրոցում Ամանորի և «Դիմակահանդեսի» կազմակերպման աշխատանքները:	դեկտեմբեր	Լ.Մնացականյան իրավ. Նախ. տնտեսվար
3.	Զեռուցման շրջանի բնութագիր 2020-21թթ:		
4.	Իրավական և հոգևոր դաստիարակության ուղղությամբ տարվող աշխատանքները դպրոցում:		
6-ԸՆԴՆԻՍ			
1.	1-ին կիսամյակի ուսման առաջադիմության ամփոփում:		տնօրեն, ԱԽ նախ.
2.	Հայոց բանակի 29-րդ տարեդարձին նվիրված միջոցառման անցկացում. «Վազգեն Սարգսյան, մերօրյա հերոսներ. ոգու փորձություն»	հունվար 2021թ	ԱԽ ԴԱԿ
7-ԸՆԴՆԻՍ			
1.	Աշակերտների բացակայությունը 10-12-րդ դասարաններում:	փետրվար 2021թ	ԱԽ նախ. ԴԱԿ
2.	Ռեզումե հայրենասիրական աշխատանքների դրվածքը:		Ա. Հովսեփյան, ռազմ. նախար
8-ԸՆԴՆԻՍ			
1.	ա/Հերթապահության ուղղությամբ տարվող աշխ. բ/ սոցիալական առողջապահական մասնախմբի աշխ. գ/իրավական կարգապահական մասնախմբի աշխ.	2021թ մարտ	հերթ. նախ., ԱԽ նախագահ կանաչապ. հանձնախումբ
2.	«Կենցուրու» մաթեմատիկական մրցույթին մասնակցելու մասին:		
3.	Դպրոցում գարնանային աշխատանքների կազմակերպում:		
9-ԸՆԴՆԻՍ			
1.	6-12-րդ դասարաններում ԱԽ հաշվետու ժողովների և նիստերի անցկացում:	2021 թ ապրիլ	ԱԽ նախ. ԴԱԿ
2.	Տիգրանյանի, ՆԶՊ, երաժշտություն և տեխնոլոգիա առարկաների միամսյակի պլանի քննարկում և հաստատում:		մարզ. աշխ. հանձնախումբ
10-ԸՆԴՆԻՍ			
1.	4-րդ, 9-րդ և 12-րդ դասարանների գիտելիքների ստուգման, ավարտական և փոխադրական քննությունների անցկացման կարգի ԿԳՆ հրահանգի մասսայականացման և նախապատրաստական աշխատանքների մասին:	Մայիս 2021թ	ԱԽ նախ. ԴԱԿ Տնօրենի տեղակ.
2.	2-րդ կիսամյակի և տարեկան ուսման առաջադիմության ամփոփում	Մայիս 2021թ	
11-ԸՆԴՆԻՍ			
1.	2020-21 ուստարվա ամփոփում	Հունիս 2021թ	Տնօրենի տեղակալ
2.	2020- 2021 թ ուստարվա դպրոցի ԱԽ ընտրությունների նախապատրաստում	հունիս	ԱԽ նախագահ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ

N	Կատ. ժամ.	Աշխատանքի բովանդակությունը	Պատասխ. անձ.
ՍԵՊՏԵՄԲԵՐ			
1.	14.09.2020	2019-2020 ուսումնական տարվա նախապատրաստական աշխատանքներ ա) ուղեցույցի կանոններին համապատասխան դասասենյակները կահավորել, հակահամաճարակային պաստառներ փակցնել, ներդպրոցական վերահսկողություն և հերթապահություն սահմանել: բ) տոնական տեսքի բերել դասարանները գ) նախապատրաստվել I զանգի արարողությանը	ԱԽ ԴԱԿ
2.	20.09.2020	Անկախության օրվան նվիրված միջոցառումներ. Ֆիլմի դիտում և քննարկում (հեռավար)	ԱԽ նախագահ ԴԱԿ
3.	28.09.2020	6-րդ դասարանը Արցախյան պատերազմի մայիսյանցի հերոս Արմենակ Օհանյանի անվամբ կոչելու երդման արարողություն	ԴԱԿ ԱԽ, պատմ. ուս.
ՀՈԿՏԵՄԲԵՐ			
1.	05.10.2020	Շնորհավոր տոնը, ուսուցիչ՝ ջ» միջոցառում Աշակերտական ինքնավարության օր	ԱԽ, ԴԱԿ
2.	15.10.2020	Այվազ Թարվերդյանի ծննդյան օրը միջոցառում գյուղի հուշարձանի մոտ:	ԱԽ Ա. Թարվերդյանի անվ. 11-րդ դաս.
3.	19.10.2020	Աթաբեկ խնկոյանի ծննդյան 150-ամյակի առթիվ նրա մասին սլայդի պատրաստում:	ԱԽ, Գ. Փարսիլյան ԴԱԿ
ՆՈՅԵՄԲԵՐ			
1.	1-10.11.2020	«Մաքուր հայրենիք» ծրագրի շրջանակներում ավարտել աշնանային ծառատունկը Ս. Մովսիսյանի անվան թաղամասում:	ԱԽ
2.	24.11.2020	Հրաչյա Ներսիսյանի ծննդյան 125-ամյակի առթիվ մեծ դերասանի մասին նյութի պատրաստում և ԱԽ էջում հրապարակում:	ԴԱԿ ԱԽ. ՆՁՊ մ/մ
	25.11.2020	ՀՀ և ԼՂՀ ազգային հերոս Մոնթե Մելքոնյանի ծննդյան 61-ամյակի կապակցությամբ կազմակերպել ցերեկույթ:	ԱԽ պատմ. ուսուցիչ
	26.11.2020	«Երեք ապուշները ֆիլմի» դիտում. ֆիլմում արծարծված կրթական հարցերի շուրջ քննարկման կազմակերպում:	ԴԱԿ, ԱԽ
ԴԵԿՏԵՄԲԵՐ			
1.	01.12.2020	ԶԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրվան նվիրված ռեֆերատ աշխատանքներ և քննարկում (հեռավար)	ԱԽ կենսաբ. ուս.
2.	07.12.2020	Ցերեկույթ՝ նվիրված 1988թ. Մայիտակի երկրաշարժի	ԱԽ,

		30-ամյա տարեկիցին	ԴԱԿ
3.	10.12.2020	Մարդու իրավունքների համաշխարհային օր	Լ.Մնացականյան
4.	22.12.2020	Տարեմուտի տոնական միջոցառումներ տարրական և միջին ու ավագ դպրոցների համար	ԱԽ, ԴԱԿ
ՀՈՒՆՎԱՐ 2021 թ			
1.	27.01.2021	Հայոց բանակի ծննդյան 29-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում կազմակերպել հանդիպում մեր շրջանավարտ նորօրյա հերոսների հետ:	ԱԽ ՆԶՊ ուսուցիչ Հ. լեզվի մ/մ
	27.01.2021	Մրցույթ «Կերպարվեստ» առարկայից «Հայկական բանակ»	ԱԽ, ԴԱԿ, կերպարվ. ուս.
ՓԵՏՐՎԱՐ			
1.	14.02.2021	Տյառնընդառաջի տոնը դպրոցում:	ԱԽ, Հեպ ուս., ԴԱԿ Օ.Իսրայելյան,
	19.02.2021	Գիրք նվիրելու ավանդական արարողություն՝ նվիրված Հովհ. Թումանյանի ծննդյան օրվան:	ԱԽ, ԴԱԿ գրադարանավար
2.	21.02.20 21	Անցկացնել «Հայ ասպետ» խաղ-մրցույթը՝ նվիրված մայրենիի տոնին, ԱլՍպենդիարյանի 150 և Անրի Վերնոյի 100-ամյակներին:	ԱԽ ԴԱԿ
3.	25.02.2021	Հայոց մեծ գորավար Ա. Օզանյանի ծննդյան տարեդարձին նվիրված տոնական ցերեկույթ:	Տնօրենի տեղակալ ԱԽ, ԴԱԿ
ՄԱՐՏ			
1.	01.03.21	Արտակարգ իրավիճակների օրվան նվիրված ուսումնական վարժանք	ԴԱԿ, ՆԶՊ ուս. դասուցիներ
2.	Մարտ.2021	Սկսել զարնանային գյուղատնտես. աշխատանքները:	ԱԽ, համադպ.
3.	Մարտի 8.	Մարտի 8-ին կազմակերպել միջոցառում՝ նվիրված կանանց միջազգային օրվան:	Ախ. ԴԱԿ
4.	Մարտի	«Մեր շնորհալիները» տեսանյութի պատրաստում	Ախ
ԱՊՐԻԼ			
1.	Ապրիլ	Ապրիլի 1-ը հումորի օր	ԱԽ
2.	Ապրիլ	Ապրիլի 7-ը «Մայրության և գեղեցկության օր»	ԱԽ
3.	02.04.2021	Հայրենասիրական հանդիպում-քննարկում Ապրիլյան պատերազմի մայիսյանցի հերոսների հետ:	ԱԽ, ԴԱԿ, դասուցիներ
4.	24.04.2021	Կազմակերպել ցերեկույթ՝ նվիրված Եղեռնի զոհերի հիշատակի 106-րդ տարեկիցին:	ԱԽ, հ-լեզու մ/մ
5.	25.04- 30.04.2021	Անցկացնել հայկական կինոյի շաբաթ՝ նվիրված Եղեռնի զոհերի հիշատակի 106-րդ տարեկիցին	ԱԽ, ԴԱԿ
ՄԱՅԻՍ			
1.	Մայիսի 1 2021	Տոնական միջոցառում՝ նվիրված աշխատավորների համերաշխության միջազգային օրվան՝ մայիսի 1-ին	ԱԽ. ԴԱԿ
2.	2021 Մայիսի 8	Շարային քայլքի և հայրենասիրական երգի համադպրոցական ստուգատես անցկացում՝ մայիսյան հաղթանակներին:	ԱԽ.ՆԶՊ մ/մ
3.	Մայիսի 28	ՀՀ առաջին հանրապետության տոնին և Սարդարապատի հերոսամարտի 101-ամյակներին, մայիսյան եռատոներին նվիրված տոնական ցերեկույթ Սարդարապատի հուշահամալիրում:	ԱԽ, ԴԱԿ